ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին, հինգշաբթի – Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 48):

Մայիսի 4-ին, կիրակի - Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպս. Գալթագճյանը: Հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 11-ին, կիրակի – Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպս. Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Մայիսի 18-ին, կիրակի - Յիշատակ Եղիայի մարգարէին:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դանիել վարդապետ Թումանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Մայիսի 25-ին, կիրակի – Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպս. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց: